ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Որոշման նախագծով սահմանվում է Սիսիան համայնքում տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը, որն ուժի մեջ կմտնի 2025թ.-ի հունվարի 1-ից՝ հիմք ընդունելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 7,8,9,10,12 հոդվածները, Հայաստանի Հանրապետության հողամասերի (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերի) և շինությունների տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության սահմանները, սահմանների կոորդինատներն ու տարածագնահատման գոտիականության քարտեզները սահմանելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն, 1994 թվականի սեպտեմբերի 28-ի Ն 462 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու և 2002 թվականի հուլիսի 25-ի N 1101-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 2020թ.-ի հունիսի 4-ի թիվ 1023-ն որոշմամբ սահմանված համայնքի բնակավայրերի գոտիականության սահմաններն ու գործակիցները:

Համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության բաժնի գլխավոր մասնագետ, բաժնի պետի պարտականությունները կատարող՝ Հ.Ստեփանյան

11.11.2024թ

ՏԵՂԵԿԱՆՔ

2025թվականի համար Սիսիան համայնքում սահմանված տեղական տուրքերի և վճարների վերաբերյալ ավագանու համապատասխան որոշումն ընդունելուց հետո բյուջեի կազմման ժամանակ կիրականացվի եկամտային մասի ճիշտ պլանավորում:

Համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության բաժնի գլխավոր մասնագետ, բաժնի պետի պարտականությունները կատարող՝ Հ.Ստեփանյան

11.11.2024թ